

A GOOD  
ADVERTISING  
MEDIUM

# Ք Ա Ղ Ա Ք Ա Ց Ի

Շ Ա Բ Ա Թ Ա Թ Ե Ր Թ  
THE CITIZEN

THE ONLY  
ARMENIAN  
PAPER  
Published in  
California.

ՀԱՄԱՐ Ա. ԹԻԻ 2.

ՖԵՆՉԵՆՈ, ՔԱԼ. ՕԳՈՍՏՈՍ 23, 1902

ԳԻՆ 5 ՍԷՆՏ

## ՉԱՆԱՉԱՆ ԼՈՒՐԵՐ

Անցեալ շաբթու՝ Երեքշաբթի երեկոյ՝ Գրադարանի Միութիւնը Ընդհանուր Ժողով պիտի ունենար շատ մը սակախ խնդիրներ կարգադրելու ու Միութիւնը հաստատ հիման մը վրայ դնելու համար խորհրդակցելու նպատակաւ: Սակայն մեծամասնութիւն ըլլալուն կարելի չեղաւ օրինական նիստ կազմել: Ժամանակը օգտակար կերպիւ անցունելու համար, սակայն, Ատենապետին խնդրանք՝ Պատ. Պէննէիան որ ներկայ էր հոն, գեղեցիկ քաջակերական մը խօսեցաւ ներկայից, որոց մէջ շատ մը հիւրեր ալ կային: Ատենախօսը ի մէջ այլոց խնդրեց Միութեան անդամներէն Գրադարանը զննել այնպիսի զիբքի մը մէջ՝ որ կարողանար իրմէ ակնկալուած օգուտները տալ Հայ Հասարակութեան: Ատենախօսութենէ յետոյ իօսք տրուեցաւ Միութեան անդամներուն որ իրենց կարծիքները յայտնեն այս մասին ու մատնանիչ ընեն այն միջոցներ որոնցմով կարելի էր ընկերութիւնը նախանձելի վիճակի մը մէջ դնել:

Երկար բանակիւններէ յետոյ տեսնուեցաւ որ բացի երեք անդամներէ մնացեալք համախա էին սա կարծիքին, թէ նախ՝ կանոնադրի պահանջամբն հասկնալով՝ պէտք էր Միութեան անդամներուն թիւը ճշդ դնել, և յետոյ կանոնադրի քննութեան ձեռնարկել՝ կարգ մը պահասեալ ու կարեւոր յաւելումներ ու փոփոխութիւններ ընել կրնալու համար: Եւ որովհետեւ մէկ ու կէս տարիէ ի վեր ոչ ոք տուրք տուած էր՝ հակառակ օրինաց մէկ շատ պարզ արամադրութեան, ստանք կը պնդէին թէ Գործադիր Ժողովն զիմում ընելու էր անդամներուն ու օրինաց արամադրութիւնը յիշեցնելով՝ հին տուրքերը գանձելու էր, որպէս զի կարելի ըլլար գիտնալ սպառայ առնուելիք քայլափոխին փափաքազ ու արամադրի անդամներու իրական թիւը: Այս գաղափարին հակառակողներէն՝ Տիարք Մարգարեան, Թիւֆէնկճեան և Աւրան Աւրանեան պնդեցին թէ իրենց հասկացողութեամբ նախորդ նիստի մէջ որոշուած էր ամեն հին խնդիր մտնալ, փոխել Միութեան կանոնադրը, Գրադարանը հրապարակ ընել ժողովրդին ու տուրքերու քանակութիւնը գեղջել, որպէս զի անդամները գումարել կարելի ըլլար: Ասոնք կրտէին նաև թէ սա հասկացողութեամբ էր որ նախորդ նիստի ներկայից տետրակը ստորագրած էին: Ի զուր տեղը Հովիւ Վարդապետն ու Պատ. Պէն-

նէիան ինչպէս նաև միւս անդամներն ջանացին համոզել թէ հարկ անհրաժեշտ էր գտնուած կանոնադրի համաձայն ընթանալ՝ նոր ծրագիր մը որդեկրել կարենալու համար, և թէ անդամներն առանց իրենց հին պարտքերը վճարելու իրաւունք չէին կրնար ունենալ կանոնադրին դաշխել: Օրինական այս կէտ հետոնէրը սարսու վիճարանողներն, ու խնդիրը զգուելի երևոյթ առաւ՝ երբ մանաւանդ մեծամասնութիւնը ամբաստանուեցաւ իբր Միութիւնը իրեն անձնական կրից ու զաղտնի նպատակներու ծառայեցնելու համար ցած մեքենայութեանց գործակատար: Տեսնելով թէ գէշ կերպարանք կառնէր խնդիրը՝ ժողովն փակուեցաւ, բայց բանակուելի մնացեալ մասը սրահէն դուրս տեղի ունեցաւ մինչև կէս գիշեր: Ար բենք սակայն թէ Գործադիր Ժողովն պիտի աշխատի օրինաց արամադրութեան համաձայն իր գործը շարունակել:

—Անցեալ շաբթուան վերջերը՝ Ընդհանուր Գառախազին կողմէ Բարձրագոյն դատարանին ներկայացուեցաւ Տիգրան Մանուկեանի դէմ եղած սպանութեան ամբաստանագիրը:

—Վերջի նախնական ընտրութեանց մէջ Հասարակապետականաց կողմէ երկու հայ պատգամաւորներ ընտրուեցան 5րդ և 10րդ քաղաքարտիներէն: Այս երկու անձերն են Տիարք Գ. Խմիրզեան և Յովնաթան Ազատեան:

—Հրանդ Մեքընեան, որուն կուրծքին վրայ ծանր գործողութիւն մը տեղի ունեցաւ քանի մը շաբթուա առաջ Լոս Անճըլլոսի մէկ հիւանդանոցին մէջ, մօտերս կը դառնայ Ֆրէզնօ բուրժուովին ապաքինած:

—Թուղի վաճառականներու (Փաքքը) մէջ կռիւ ու մեծ մրցում կայ: Ասոնցմէ վեցը՝ Ինտրայարն Ընկ. Ա. Լ. Հապս, Սերբեան Եղբարք, Մարգարեան ընկ. Փիթ Տրօթ և Թ. Ճ. Համընտ՝ անցեալները զաղտնի ընկերութիւն մը կը կազմեն մէջերնին՝ ի հարկէ իրենց նպատաւոր նպատակի մը համար: Մնացեալ մեծ վաճառականներէն երեքը Կրիֆին և Ըսքէլի, Փօրթըր Եղբարք և Ֆինիքս Ընկ.՝ լուր տանելով այս մասին՝ առջիններու գլխին խաղ մը խաղալու համար թուղի գնին վրայ երեք չորրորդ սէնթի յաւելում մը կընեն յանկարծ և գնողներ զրկելով զուրսերը՝ Մօտեսոյէ մինչև Պէյքսֆիլա ձեռք անցած բոլոր թուղերը կը գնեն այդ գնով, անանկ որ միացեալ վեցերու համար շատ քիչ պտուղ կը մնայ ձեռք բերելիք. և սակէ

զատ կարողին նոյն պտուղը շատ աման գինով ի վաճառ հոնել այս տարի՝ մասնաւորապէս պատժելու համար Սերորեանները՝ Ֆրէզնոյի թուզի ամենամեծ վաճառականները՝ սա միայն պատճառի համար թէ այս սունը մերժած է մանկ Չամիչի ընկերութեան մէջ միւս վաճառականներուն հետ: Այս կարծիքը որ զեռ ստուգութեան կը կարօտի, եթէ իրազեթիւն ալ ըլլայ յիշեալ իրեք տունները 100000 տարարի կորուստ մը պիտի ունենան ու պատժած պիտի ըլլան Սերորեաններէ զատ՝ միւս վաճառականներն ալ որք Չամիչի ընկերութեան մէջ մտած են արդէն: Գանձօթ վաճառականներէ մին այս մտայն հարցման մը պատասխանելով ըսած է թէ Սերորեաններ մեծ փնտրի մը չի պիտի ենթարկուին, և ուրիշ չոր պտուղներու ու շամիչի վրայ աւելի ընդարձակ գործ ընելով թուզին պակասը պիտի լրացնեն անշուշտ:

**ՌԱՄԿԱՎԱՐԱԿԱՆՈՅ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎՃ**

Անցեալ Չորեքշաբթի օր Գաւառիս ստորարտ-  
ժանմանց Ռամկավարական Ներկայացուցիչները ի-  
րենց Ընդհ. Ժողովը ունեցան քաղաքիս մէջ՝ Գա-  
ւառական պաշտօնէից ընտրելիներու ցանկը պատ-  
րաստելու համար: Ժողովին նախագահ ընտրուեցաւ  
Գաւառը Մ. Ք. Հարիս. և Ա. Լ. Ֆէյ՝ Ատենա-  
զպիր: Ներկայ էին 312 ներկայացուցիչներ:

Ռամկավարական յայտագիր մը, ինչպէս նաև  
Չիքակոյի ազգային դաւանագիրը որդեգրել և վա-  
ւերացնել յետոյ՝ Ժողովը որոշմանց յանձնախմբի  
անդեկագիրը ստացաւ ու ընտրութեան ձեռնարկեց:  
Լրագիրս մամուլ գնացած ժամանակ ընթերցիչներու  
հետեւեալ ցանկը պատրաստուած էր արդէն:

Նահանգային ծերակոյտի անդամ — Մայր Վայրս.  
Շէրիֆ—Չ. Տ. Քօլինս. Բաւնթի Քլարք— Ո. Օ. Մայրս.  
Օտիթըր— Փօլ Հունց. Բիքօրտըր — Չարլս Մաք Քար-  
ալլ. Ընդհ. գաւառագ — Տ. Ս. Չըրչ. Ասէսըր —  
Ճ. Ո. Քամերն. Գանձապետ — Բ. Հ. Պրամիթ.  
Գարոններու Տեսուչ — Ֆ. Մ. Էէյն. Քօրօնըր — Տըթ.  
Ա. Պ. Քօլլըն. Սըրուէյըր — Ս. Տ. Տէյլօր:

Այս ընտրութիւններն ըլլալէ յետոյ Ժողովը Գա-  
ւառական բաժանմանց համաձայն՝ անջատ ժողով-  
ներու բաժանուցաւ՝ Նահանգային Ընդհանուր Ժո-  
ղովի ներկայացուցիչներու, Գաւառական Գաւառ-  
ւորներու և ուրիշ քանի մը երկրորդական պաշտօ-  
նէից ընտրելիաց ցանկ մը պատրաստելու նպատակաւ:

**ԱԶԳԱՅԻՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՅԻ**

Յառաջիկայ Կիրակի, 24 Օգոստոս, Ազգային Եկե-  
ղեցոյ մէջ Ժամերգութիւնք կսկսին ժամը 9. 30 ին:  
Քարոզի ժամն է 11: Նիւթն է՝ "Աւերանութիւն՝  
Ընտանեկան Ընկերութեան հիմ, և մեր Հայրենիք":  
Երկրորդական ժամը 3 ին Կսկի Կիրակնօրեայ գասը,  
նիւթ ունենալով՝ "Կիրակի և Տօն օրերու պաշտա-  
մունք և Եկեղեցական կարգ ու օրէնք Հայաստան-  
եայ Եկեղեցոյ": Ետընակութիւն, և երկրորդ  
Պատուիրան Ս. Եկեղեցոյ:

**ՍԵՐՈՐԵԱՆ ԵՂԲԱՐՔ**

Ամենաբարձր գին կը վճարեն

Թ Ո Ւ Զ Ի , Դ Ե Ղ Զ Ի Ո Ւ Ա Մ Ե Ն Տ Ե Ս Ա Կ

Զ Ո Ր Պ Տ Ո Ւ Ղ Ն Ե Ր Ո Ւ :

**ԾԱԽՈՒ ԳՐԻՔԵՐ**

Ամէն անոնք՝ որք կը փոփաքին վէճերովի սպուած  
որ և է գիրք ստանալ, կրնան զայնս ձեռք բերել իւրմ-  
բազրութեան միջոցաւ, որ նոյն Միաբանութեան գոր-  
ծակալ կարգուած է:

**Ֆ Ր Է Զ Ն Օ**

**ԼԸՄՊԸՐ ՔԸՄԲԸՆԻ**

ԳՐԱՍԵՆԵԱԿ ՈՒ ՎԱՃԱՌԱՏ Ե Ղ Ի Ն  
ԱՅ Կ ՎԷՆԹՈՒՐԱ ՓՈՂՈՑՆԵՐՈՒ ԱՆԿԻՒՆԸ  
Թէլէֆօն — — — Մէյն 24  
ՖԻԷՉՆՕ, ՔԱԼԻՖՅՈՐՆԻԱ.

**ՃՕՐՃ ՊՐԱՏԸՐՍ**

ՀԱԳՈՒՍՏՆԵՐՈՒ, ԳԼԽԱՐԿԻ ԵՒ ԱՄԵՆ ՏԵՍԱԿ  
ՃԵՐՄԱԿԵՂԵՆԻ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐ ԵՒ  
ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ԴԵՐՉԱԿՆԵՐ.

1109 ձէ՛Յ Փողոց, — Ֆիւք Պլաք — Ֆրէզնօ.  
Թէլէֆօն — — — Ուայթ 711

Հասարակութիւնը վաղուց ի վեր փորձով գիտէ ար-  
դէն թէ այս խանութին մէջ ծախուած ամէն սպրանք  
իրենց անսահմանուն մէջ լաւագոյններն են, բայց շատ  
քիչեր գիտեն թէ իրենց գիները՝ բաղդատարար՝ ու-  
րիշներէ բնաւ սարքերութիւն չունին:

Կը փոփաքինք որ անգամ մը փորձէք և վտաճա-  
ցնէք զօք զձեզ այս կարեւոր կէտին համար. անկէ  
յետոյ ուրիշ տեղ չէք երթար զնել ինչ որ կարելի է  
ստանալ ՃՕՐՃ ԵՂԲԱՅՐՆԵՐԷՆ:

Թուփիքայէն առնուած հեռագրապուրին համեմատ՝  
Սանթա Ֆէ ընկերութեան տեղական ներկայացու-  
ցիչը յատուկ ծանուցումով մը կը յայտարարէ թէ  
Սեպտեմբեր և Հոկտեմբեր ամիսներու մէջ Արևելքէն  
Քալիֆորնիա եկողներու ճանապարհատանի գինը  
պիտի ըլլայ. Չիքակոյէն՝ 33 տար. Մէնթ Լուիէն,  
Մէմֆիսէն, Նիւ Օրլինսէն և Միսիսիպի գետէն  
սողին եղող կէտերէ՝ 30 տար. Քանասա Սիթիէ և  
Սզուրի գետէն ասդին եղող տեղերէ՝ 25 տար:



Ք Ա Ղ Ա Ք Ա Ց Ի

ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

Կը հրատարակուի ամեն Շաբաթ օրեր ՚ի թիւ 1033  
ՃէՑ Փողոց, Էքսփրէսի Շէնքին մէջ:

Հ. ԷԿԵՆՆԱՆ, ԽՄԲԱԳԻՐ—ՏՆՕՐԷՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Միացեալ Նահանգներու և Քանադայի Համար  
Տարեկան մէկ ու կէս Տօլ. — Վեցամսեայ 75 Սենթ  
Ուրիշ երկիրներու Համար

Տարեկան 10 Ֆրանկ — — Վեցամսեայ 5 Ֆրանկ

Քաժանորդագիրը կանխիկ վճարելի է միշտ  
Նամակ, ծրար կամ դրամ կը զրկուին Խմբագրու-  
թեան հետեւեայ հասցէի:

To The Editor of  
THE CITIZEN  
P. O. Box 1224 Fresno, Cal.

THE CITIZEN

The Only Armenian Paper Published in the State of California.

H. EQUINIAN, Editor and Manager

OFFICE, 1033 J STREET FRESNO, CAL.

SUBSCRIPTION RATES (Payable in Advance)

One Year..... \$1 50 | Six Months..... 75 Cents

ՅՐԷՋՆՕ, ՔԱՒԻՅՕՐԵՒԱ. ՕԳՈՍՏՈՍ 23, 1902

ՄԵՐ ՇՆՈՐՀԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Շաբթուս մէջ շատ մը բարեկամներէ ու համակիր-  
ներէ շնորհաւորական ու քաջալերական նամակներ  
ստացած ենք: Ասոնց ինչպէս նաև սակէ յետոյ գա-  
լիքներուն առանձին նամակաւ պատասխանելու զիւ-  
րութիւն չունենալով՝ մեր շնորհակալութիւնը հրապա-  
րակաւ կը յայտնենք իրենց բարոյական այս թանկա-  
զին օգնութեան համար:

ԳՈՐԾԱԿԱՆՆԵՐ ԿՈՒՋԵՆՔ

Ամեն հայարնակ քաղաքի մէջ Շաբաթաթերթս սա-  
րածելու համար: Պայմանները շատ նպաստաւոր են:  
Գրել Խմբագրութեան հասցէին:

ԱՆՋՆՈՒԻՐՈՒԹԵԱՆ ԳԱՍ ՄԸ

—0—

Մարդուս կեանքը իր անհատական ստացումը չէ,  
այլ մարդկային կենաց մէկ մասը կը կազմէ. ուստի  
անհատ մը իրաւունք չունի իր կեանքը սպարդիւն  
թողուլ հանրութեան և անօգուտ՝ ընդհանուրին համար:

Բժշկական խուզարկութիւնները հրաշալի զիւտեր  
ըբաժ են և կընեն ամէն օր: Այս զիւտերուն մէջ ամե-  
նէն աւելի մտադրանքէն մին կընայ նկատուիլ սա

հաստատուած ճշմարտութիւնը՝ թէ ամէն անհատ՝ հոգ  
չէ թէ ըլլայ մեծատուն կամ աղքատ, գիտուն թէ ազէտ,  
մեծ կամ փոքր, իր հետ ունի միշտ տարբեր միլիոնէ  
աւելի պաշտպան զինուորներ, որոնք կապրին իրեն  
համար, կը գործեն իրեն համար և կը մեռնին իրեն  
համար մի միայն:

Որպէս զի մենք սպարինք ու երջանիկ ըլլանք, այս  
քաջամարտիկ զիւցազուները՝ կարմիր համազգեստներ  
հագած զօրքերը՝ իրենց կեանքը կը զոհեն առանց տըր-  
տունջի և առանց զժգուհութեան: Ասոնք թէև զօրեղ  
պատերազմիկներ են ինքնին՝ բայց շատ ու շատ պզո-  
տիկ են իրենց յատուկ կազմութեամբ, անանկ որ ե-  
թէ այդ զինուորներու 3500ը իրարու վրայ կեցնելու  
ըլլանք՝ հազիւ մէկ մատնաչափ բարձրութեամբ սիւ-  
նակ մը կը կազմեն: Սակայն իրենց այս փոքրութեան  
մէջ իսկ գիտեն կռուիլ, և կը կռուին ցոյսին շունչ  
մինչև որ յաղթեն կամ անոնց վերջինը բնաջինջ ըլլայ:

Այս զիւցազուներու բանակին մէջ ճերմակ գրօ-  
շակ պարզելու սովորութիւնը մուտք գտած չէ բնաւ.  
անձնատուր ըլլալու գաղափարը՝ գերի ստանալու կամ  
գերի տալու սովորութիւնը բոլորովին անմասն ի-  
րենց համար: Կը կռուին՝ կատարելապէս յաղթելու  
կամ բոլորովին բնաջինջ ըլլալու միակ որոշմամբ: Եւ  
այս ամէնը տեղի կունենայ շատ անգամներ, մեր կե-  
նաց ապահովութեան ու երջանկութեան համար միայն:  
առանց մեր գիացած ըլլալուն:

Թերևս աւելորդ է ըսել թէ այս զիւցազուներու  
բանակը կապրի և կը կռուի մարդկային արիւնին մէջ:  
և արգարև անոնք են որ մեր անգոյն արիւնին կարմիր  
գոյն կու տան:

Այս փոքրիկ զինուորները, գուցէ շահեկան է ըսել,  
երկու տեսակի կը բաժնուին, կարմիրներ և ճերմակներ.  
որոնք տարբեր պաշտօններ ու տարբեր գործեր ունին  
սեանելիք: Ճերմակները՝ որոնց մէկին զէմ 400էն մին-  
չև 1000 կարմիրներ կան մեր երակներու մէջ՝ թէև  
առաջիններու կրկին մեծութիւնը ունին, բայց կռուի  
մէջ անսիրտ գոտալիքներ են: Անոնք կը նմանին  
այն մարդոց՝ որոնք կեանքի մէջ իրենք իրենց համար  
միայն կապրին և նշանակութեանէ զուրկ են խոստու:

Եթէ ահաւոր կռուի մը մէջ մեր պզտիկ պաշտպան-  
ները արմատախիլ ըլլան, ճերմակները անոնց օգնու-  
թեան երթալու չափ քաջութիւն իսկ ցոյց չեն տար,  
յար եւ նման այն մարդոց որոնք իրենց զրացիին  
իրենց ընկերոջ ու ազգայնոց զժբաղութեան մէջ ի-  
րենց մասն ու բաժինը չեն կրնար տեսնել, թէև ուշ  
կամ շուտ նոյն զժբաղութեան հետեւութիւնը կը  
կրեն ուղղակի կամ անուղղակի կերպիւ:

Գիտնական մը ըլլալու պէտքը չունիմ ըսելու հա-  
մար թէ մեր այս պաշտպան զինուորները շարունակ  
կռուի մէջ են արտաքին բազմաուսեսակ թշնամիներու  
հետ, որոնք մեզ շրջապատած պատեհ սոթի մը կըր-  
պատեն ներս խուժելու և մեզ գրաւելու համար: Մեր  
անտեսանելի զիւցազուներուն կը պարտինք մեր ա-  
պահովութիւնը երբ կը քաղենք, կը շնչենք կամ կը  
քնանանք: Գիտութիւնը այս թշնամիները միքրօպ

անուանած է կամ զանազան հիւանդութեանց սերմեր:

Մենք ամենքս ալ կը ճանչնանք զանոնք՝ եթէ ոչ անձամբ գէթ անոնց անուանովն ու տիւրը համբաւովն, թոքախտի, հարբուխի, թիֆոյի և ուրիշ անհամար հիւանդութեանց միքրոպները այն արիւնարբութչնամիներն են որք շարունակ մրցման ու կռուի մէջ են մեր պաշտպան զինուորներուն հետ:

Երբ պաղ կառնենք յայտնի է թէ այդ մասնաւոր հիւանդութեան միքրոպներն են որք յարմար առիթ մը կամ անպաշտպան անցք մը գտնելով խուժած են մեր կապուածութեան մէջ: Անոնց ներս մտած բուպէին խի արիւնուշտ կռիւը կոսի: Երբ չարամիտ թրչնամին կը յաղթուի կռուի գաշտին վրայ ու բնաջինջ կըլլայ, գոհունակութեամբ մը կըսենք իրարու "պաղս անցուցի վերջապէս", որ կը նշանակէ թէ աճաւոր բայց լուիկ կռուին մէջ թչնամին բնաջինջ եղած էր մեր անձնուէր զինուորներուն առջև: Այս անտեսանելի կամուտներուն անձնուիրութիւնը տեսնելով մարդ չի կրնար պահ մը չը խոտովանիլ թէ անձնուիրութիւնը բնութեան մէկ օրէնքն է որ չի փոխուիր, և բարոյականի մէկ հիմնաքարը՝ որուն վրայ կը հանգչին մարդու նկարագիրը, առաքինութիւնը ու ամէն գովելի յատկութիւններ:

\* \* \* \* \*

Երբ կը տեսնենք կամ կըմբռնենք այս միլիոնաւոր քովերը՝ որոնք իրենց կեանքը կուտան անաբնատու մեզ ապրիցնելու համար, պէտք չէ՝ որ անանցմէ պզտիկ դաս մը առնենք ու սորվինք գէթ քիչ մը անձնուէր ըլլալ մեր ընկերին և մեր ազգայիններուն ամէն գործերու մէջ: Պէտք չէ՝ գիտնանք թէ մարդու մեծագոյն պարտականութիւնը կը կայանայ իր ընկերոջ օգտակար և անձնուէր ըլլալու գաղափարին մէջ:

Այն մարդ որ տակաւին չէ սորված կամ չէ զգացած թէ իր կեանքը լուի իրեն չի վերաբերիր, և կամ կը կարծէ թէ պարտականութիւն մը չունի կատարելիք գէպ իր ընկերը, մանաւանդ գէպ իր ազգը, մեր արեան մէջ չըջող այդ միլիոնաւոր մանրիկներու մէկին խի արժանիքը չի կրնար առնեցած ըլլալ:

Այն է մեծ մարդը որ կապրի ուրիշին համար: Եւ աշխարհի վրայ մեծ անոնք են եղած որոնք իրենց կեանքը սուտած են ուրիշի հանգստութեան ու երջանկութեան համար:

Պէտք է հաստատուն կերպով գիտնանք ու սորվինք թէ ամէնքս իրարու հետ կապուած ենք անքակտելի կապերով, թէ մէկին գժբազդութիւնը միւսին կը վերաբերի: Եթէ մայր բնութիւնը սորվեցուցած է կարմիր մանրիկին զիւցաղնական կռիւ մղել մեր թչնամեաց գէմ, բուսականաչափ խելք սուտած է մեզ գիտնալու թէ մենք ալ մեծ մարմնի մը՝ ամբողջ ազգի մը պաշտպան պզտիկ մանրիկներն ու զինուորներն ենք, նոյն մարմնոյ կենդանութեան և սպառնալովութեան համար կռուելու և ի հարկին մեռնելու պաշտօնով:

Անձնուէր ըլլանք մեր ընկերին և ամբողջ ազգին:

Ծ Ա Ղ Կ Ա Ք Ա Ղ

—0—

—Երբ մէկը ամէն յայտնած գաղափարիդ կը համաձայնի, պատեհութիւն պիտի փնտռէ ծաղրելու երբ կոնակդ զարձուեն:

—Չարախօսէ մը մի վախնար, եթէ քու մասիդ խօսածները սուտ են. զի սուտերը քեզ չեն վնասեր բնաւ. խի եթէ իրաւ են, չարախօս մը չէ այն:

—Տեսած չեմ չորքոտանի շուն մը որ իր բարեկամ մը լքած ըլլայ անոր գժբազդութեան ժամանակ. բայց այդ տեսակ երկասանիներ տեսնուած են շատ:

—Ամէն անոնք որ միշտ շնորհ մը խնդրելու հետամուտ են, շնորհք մ'ընելու յատկութիւնը չեն կրնար առնենալ:

—Ընդհանրապէս մարդս ինքզինքը այնչափ աղէկ չի գիտեր որչափ ուրիշները գիտեն:

\* \* \* \* \*

Կինը — Մորս գերեզմանին վրայ գրել սուտած եմ թէ "Մեռած չէ այլ կը քնանայ":

Ըրիկը — Լաւ, բայց ուրախ եմ որ չեմ հաւատար:

\* \* \* \* \*

Արդար վստասկովդ լաւ է որ միայն Չոր հացով ապրիս արդար ու անտեղ, Քան այլոց քրտանց արդիւնքով պատես Սեղանդ պէս պէս խորտիկով համեղ:

\* \* \* \* \*

—Քարոզչին մէկը՝ Կիւրակէ օր մը՝ առջիկ շաբթուան քարոզը կրկնել սկսեց բառ առ բառ, երբ ժողովրդէն գիտողութիւն եղաւ այս մասին՝ պատասխանեց՝ թէ գիտամբ ըրած էր այդ, գիտնալու համար թէ ժողովրդին մէջ արթուն մարդ կը մնար իր քարոզած ժամանակ:

—Քանաստեղծին մէկը, անցեալ օր, ոտանաւոր մը բերաւ մեզ "Թող սուր, ո՛հ տանս մէջ մեռնիմ"՝ խորագրով: Երբ արդիս խմբագիրը խոտացաւ բանաստեղծին փափազը կատարել՝ եթէ այս վերջինս յանձն առնէր ուրիշ անգամ խմբագրատուն չի գալ ոտանաւորով:

\* \* \* \* \*

Դատաւորը — Քառասուն տղար սուգանք՝ զոյգ մեզ կոչիկ գողցած ըլլալուդ համար:

Յանցաւորը — Ինչ, ինչ, ինչ:

Դատ. — Քառասուն տղար սուգանք ըսի:

Յան. — Բայց, տէր դատաւոր, կ'ընկները ոտքին չէին յարմարիր բնաւ:

Այցելու — (Թանգարանի մէջ) Ուր է այն մարդը որուն համար ծանուցեր էիք թէ 40 օր ծով պիտի պահէ:

Տեսուչը — (անդիտակցարար). Ներկեցէք, Տեկին, քիչ մ'առնա՞լ ճաշի պնաց:

ԾԱՆՈՒ ԲԵՐՔ

Ընդարձակ այգիի մը Սըքէթ խաղողներու բերքը կը ծախուի որթերուն վրայ: Դիմել առ

ՇԵՓԸՐՏ ԵՒ ԹԻԿ

1123 ձևՑ Ըսթրիթ.

Ս Ա Ն Ո Ւ Օ Ք Ի Ն

Ա.

Հեղազնաց գետ հանդարտիկ՝  
Օձապտոյտ Սան Ուօքին,  
Քու խոխոջներդ անկարող են  
Յափշտակել իմ հոգին:

Քու ընթացքդ հպարտ սիրուն  
Արհեստական քու զարդեր  
Ինձի համար չունին արժէք.  
Տեսքդ հոգոյս չի ազդեր:

Մորդոյ ճարտար ձեռքերն՝ ի՞նչ փոյթ  
Զարդարեր են քեզ չքով.  
Մեծ կամուրջներ պարանոցէդ  
Կախ ինկած են քովէ քով:

Թէ ջուրերդ զաւակներուդ  
Կը ծառայեն անձնուէր,  
Անոնց խոսքան հոգերուն մէջ  
Կհանք կը ցանեն վարէն վեր:

Ի՞նչ փոյթ թէ դու սիրես զանոնք  
Սուլորական մօր նման.  
Կամ ջուրերդ անոնց սիրուն  
Մանեն ի հող գերեզման:

Քու պանծանք բնական չեն՝  
Շինձու մարգեր, տունկ ու ծառ.  
Սեղի համար հրապոյր չունին  
Տաք ջուրերդ սև ցանցառ:

Ափերուդ մէջ չենք գտներ մենք  
Յիշատակներ ազգային.  
Դէմքդ՝ օտար, լեզի ես դուն,  
Ժպիտներդ՝ կեղծ ու սին:

Թէև ձայնդ հնչէ անուշ,  
Մեզ կը ժպտիս ծողրերես.  
Սիրուն տեսքդ՝ լեզուդ քաղցր  
Մեղի նուէր կը բերես:

Հասակդ երկայն՝ մէջքդ բարակ՝  
Այս փոսին մէջ պահուրտած՝  
Ծառոց մէջէն կը ժպտիս մերթ  
Հարսի մը պէս ամօթխած:

Բայց, Սան Ուօքին, մտիկ ըրէ՝  
Անկեղծութեամբ ըսեմ՝ քեզ  
Թէ դուն մեզի չունիս հրապոյր,  
Քու չես կրնար դիւթել մեզ:

Քաղցր ձայնդ մեզ կը հնչէ  
Որպէս բուս ազեղ ջալլ.  
Արհեստական ժպիտներդ  
Դէմքիդ բնաւ չեն տար փայլ:

Ներկած այտերդ՝ կեղծ քու լեզուն  
Մեզ օտար են, ո՛վ անմիտ,  
Պանծանքիդ մէջ կը տեսնենք  
Տգեղ կազմը քու վախ:

Մի փորձեր մեզ ձուրել քու մէջ.  
Մենք կեղծիքի սիրող չենք.

Թաքատոցէդ բաւ է ժպտիս.  
Դուրս եկ ըսեմ՝ ո՛վ ենք մենք:

Հեղազնաց գետ հանդարտիկ՝  
Օձապտոյտ Սան Ուօքին,  
Խոխոջներդ բաւական չեն  
Յափշտակել մեր հոգին:

Բ.

Մենք Հայեր ենք հոս պանդխտած  
Քեզ իբրև Հիւր բարեկամ.  
Իսկ Հայրենիք մ՛ունինք անդին  
Զոր կը յիշենք ամեն ժամ:

Մեր մտքերը հոն կապուած են,  
Մեր սրտերը կապին անդ.  
Մեր պատիւը մեր խոստումը  
Հոն թողած ենք մենք աւանդ:

Երգում ըրինք երբ հեռացանք  
Մեր մօր գրկէն՝ թէ յիւր ծոց  
Պիտի զառնանք օր մը նորէն  
Արբել անոր լայ ու կոծ:

Զի մեր երկիր մատնուած է  
Հուրի սուրի, արեան ծով.  
Հոն մեր եղբարք կը շարշարուին,  
Զմեզ չունին իրենց բով:

Բազմաշարշար մեր մայրը հոն  
Տիւ ու գիշեր անհամբեր  
Կրպպատէ որ շուտով երթանք  
Զիւր դարմանել խոր վէրքեր:

Մենք ուխտած ենք երբ ժամը գայ  
Վերադառնալ հոն ուր մեր  
Հայրենիքը արիւն կուլայ  
Մեր աները՝ քանդ աւեր:

Նա մեզ զրկից հոս որ սորվինք,  
Հոս անարգել միանանք.  
Երթանք օր մը շինենք մեր տուն  
Ազատ ըլլանք զօրանանք:

Մեր սիրտ ու կեանք խոստացուած է,  
Զանոնք այլոց չենք կրնար  
Նուէր բերել. զրժել խոստում  
Հանգիստուար մեր արդար:

Հրուէրդ կը մերժենք մենք,  
Այդ ժպիտդ դառն է մեզ  
Մինչ մայրը մեր կարօս կողպայ  
Ու կըսպասէ սրտակէզ:

Քու կեղծ ձայնդ ի՞նչպէս կրնայ  
Շահիլ մեր սիրտն արիւնտա,  
Որ թէև հա՛ մեր կուրծքի տակ,  
Բայց զգացմամբ կապրի հոս՝

Ուր նա առջի անգամ տկար՝  
Կեանք ստացաւ, բարախեց,  
Ուր նա զգաց ու ապրեցաւ.  
Թնդաց ուժգին ու բաղխեց:

Որչափ ալ մեծ ըլլատ Հայրատ  
Դու մեզ համար չունի գին.  
Մենք օտար ենք քեզի համար,  
Դու մերը չես, Սան Ուօքին:

Չենք կրնար մենք ձուլուիլ քու մէջ,  
Պարտք մ'ունինք մենք մեր վրայ.  
Երդում մ'ունինք զոր չենք գրտեր.  
Երկինք անոր կան վկայ:

Մենք ահաւոր Եփրատն ունինք,  
Գուցէ գիտես իւր մասին.  
Մեծ Տիգրիսը, Ճարտին ու Կուր,  
Հեղահամրոյր Արաքսին:

Անոնք մեր մէջ կարթնցունեն  
Յիշատակներ մեզ արժան.  
Անոնց անուան մենք կապուած ենք,  
Մեր արտերը՝ անրաժան:

Շարունակէ Հայրատ ճամբադ,  
Թող մեր ցաւով ողբանք մենք,  
Քեզ տեսնելով պահ մ'անվրդով  
Մեր գետերը լանք յիշենք:

Բայց երբ երթատ ծովերուն մէջ  
Հայ գետի մը հանգիպիս՝  
Ըստ Եփրատ, Տիգրիս Արաք,  
Կուր կամ Ճարտի՝ գետն Ալիս,

Մի մտնար մեզ, յիշէ իրենց՝  
Ըսէ անցած լեռ ու ծով  
Կը մաշինք Հոս տիւ ու գիշեր  
Մեր Հայրենեաց կարօտով:

Երթա՛ս բարեւո գետ նոխարնձոտ.  
Քայք չենք ուզիր մենք համրոյր.  
Մեր բարեւներն առ ու զնա  
Հայ գետերու մէկին սուր:

Մեր արցունքը աւանդ քեզի,  
Չայն իրենց սար, օտար գետ,  
Որ խառնեն զայն մեր ազգայնոց  
Արասաւորին արեան հետ:

Հ. Է.

# ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ

— 0 —

## ՄՈՒԱԽՈՏԵՐԸ ՁՆՁԵԼՈՒ ՆՈՐ ՄԻՋՈՑ ՄԸ

— 0 —

Քաղիփորնիոյ Նահանգային Համալսարանի երկրագործական ճիւղին Տեսուչը՝ Փրօֆ. Է. Վ. Հեղըրտ անցեալները տետրակ մը հրատարակեց, երկրագործներուն իրենց այգեստաններու կամ ժառաստաններու մէջէն վնասակար խոտերը բնաջինջ ընելու լաւագոյն միջոցները սորվեցնելու նպատակաւ:

Փրօֆէսորը նախ կը խօսի այն խոտերուն վրայ որք իրենց սերմերը ամրան սկիզբը կը թափեն և որոնց համար երկրագործք ընդհանրապէս քիչ կարեւորութիւն կուտան, մինչդեռ ասոնք երկիրը սկարայնող և զայն միշտ սերմանուած պահողներն են իրենց տեսակին մէջ: Այս խոտերը (սըմըր ուխոս) ոչնչացնելու համար հեղինակը կը խրատէ հողը հերկել (քըլթիվէյթ) ճիշտ այն ժամանակ երբ խոտերը իրենց սերմերը թափելու վիճակին կը մտնեն:

Խոտերով աւելի վնասակար խոտերու վրայ, ինչպէս են Մորնինկ կօրի, Սիշօր վէրպինա, Միւք ուխոս, Ճանաւըն կրաս, Պէր մուտա, Սոլթ կամ Ալքարայ կրաս, Փրօֆէսոր Հեղըրտ կըսէ թէ ասոնք բնաջինջ ընելու լաւագոյն և ամենապարզ միջոցն է զանոնք հողի մակերեսոյթէն կտրել երբ սխին ընծիւղիւ-եթէ երկրագործը աշարելով կերպիւ հետեւի այս խրատին ու զխատէ զանոնք սաւանց թոյլ սալու որ տերեւներ արձակեն ու զօրանան, իր աշխատանքը պահուած կը գտնէ անշուշտ:

Այս տեսակ խոտերէ նեղուղ երկրագործք, կաւելցնէ Փրօֆէսորը, կը մտածեն թէ այլ և այլ բազաղութիւններով կարելի է և դիւրին բնաջինջ ընել զանոնք, սա համոզմամբ թէ քանի որ սաւակները ուղբալայտա հողերու մէջ չին կրնար սպրիլուստի այս խոտերն ալ կը մեւնին անշուշտ երբ այս կարգի բազաղութիւններով թունաւորուի հողը: Սակայն տետրակին հեղինակը համամիտ չէ այս կարծիքին, և կըսէ թէ այդ օրինակ փորձերը թէ սուղի կը նստին և թէ չեն տար այն ակնկալուած՝ արդիւնքը որ կրնայ ձեռք քերուիլ յիշեալ պարզ միջոցաւ:

Այս պիտանի տետրակը, որ կրնայ մեր այգեպաններուն շատ օգտակար ըլլայ, կարելի է ձեռք բերել զիմելով երկրագործական ֆօլէճի վարչութեան:

# Թ Ր Է Յ Ն Ե Ր

100,000 Սև թուղթի թրէյզ կը ծախուին

Վարձու առնելէ շատ աժան գներով:

Օրինակը տեսնելու կամ գնի համար զիմել

Ա.

ՃՕՆ ԿՐՈՒՄԷԹԻԹ,

Մատիւրն և Պանըրի միջոցաւ

144 Ճէյ Ըսթրիթ, Ֆրէզնօ.

## ՍԿԻՒՈՆՆԵՐԸ ՁՆՁԵԼՈՒ ՆՈՐ ՄԻՋՈՑ

— 0 —

Այս վնասակար կենդանին, որ աւերումներ կը գործէ այգիներու մէջ, ոչնչացնելու նոր ու դիւրին կերպ մը գտնուած է՝ որ կարծէ փորձել: Փոխանակ թունաւորուած ցորեն զնելու անոնց բացած ծակերուն մօտ՝ որ զանոնք ուտելով մեռնին, և փոխանակ միւս ծանօթ փորձերուն՝ որք շատ անգամ ապարդիւն կը մնան, գնելու է շատ մը հին լրագիրներ ու ամեն մէկ ծակի մէջ բաւականաչափ թխելու է անկէ: Սկիւռը, որ թուղթէն չափազանց կը վախնայ, լաւագոյն կը սեպէ իր ծակին մէջ բռնտարկուած մեռնիլ անօթութենէ քան թուղթին մօտենալ՝ դուրս ելնելու համար:

Խ Ա Ռ Ն Լ ՈՒ Ր Ե Ր

Ֆրէզնոյի նոր կանոնադրութեան (Չարթըր) 250 երորդ յօդուածը կարգիւէ քաղաքիս կարգեալ պաշտօնէից քաղաքական խնդիրներու մէջ գործօն դիր մը առնել կամ նախնական ընտրութեանց տակն քուտարութեան մասնակցիլ իրենց պաշտօնները կորսնցընելու և ուրիշ անգամ պաշտօնեայ կարգուելու իրաւունքէն զրկուելու պատիժով :

Վերջի նախնական ընտրութեանց տակն սակայն, շատ ծանօթ անձինք անտես ըրին այս օրէնքը: Ասոնց մէջ յիշատակութեան արժանի է քաղաքիս հասարակաց Թանգարանի Վարչութեան կարգեալ տաննապետն՝ Րէփրայըքնի խմբագիր Չէսթըր Հ. Բովլ, որ ոչ միայն քաղաքական կազմակերպութեան մը անդամակցած ու նախնական ժողովի մը ատենապետած էր, այլ և նիւթապէս օժանդակած էր քաղաքական նպատակի համար բացուած հանգանակութեան մը ու քուէ տուած էր նախնական ընտրութեանց տակն:

Քաղաքապետ Բլիթֆըլնս այս մտտին բուր ասնելէ յետոյ մտերմական տեսակցութիւն մը ունեցաւ Մ. Բովլի հետ, որ խնդիր եղալ օրէնքը հակառակմանադրական կը նկատէր և հետևարար անարժէք:

Կանխաւ եղած հասկացողութեան մը համեմատ այս ատորքինակ օրէնքը փորձի ենթարկելու համար՝ Քաղաքապետը պաշտօնագրով մը լուր տուաւ խմբագրին թէ պաշտօնագրիկ եղած էր, և թէ իւր յաջորդը պիտի կարգէր շտաբով: Իսկ Չէսթըր միւս կողմէ գատարանէն արդիւրակիր մը ստացաւ Քաղաքապետին ընթացքը կեցնող: Դիւրին է հասկնալ, Բովլ իւր պաշտօնը պիտի շարունակէ ու Քաղաքապետը պիտի ըստ պատէ Գատարանի վճարարին, որ եթէ նոյն օրէնքը Սահմանադրութեան հակառակ գտնէ՝ Բովլ կը մնայ իր պաշտօնին մէջ ու այդ օրէնքը կը կորսնցընէ իր կարևորութիւնը: Հետաքրքրութեամբ կրտստուի այժմ մայր գատավճարին, ու օրէնագէտներէ շատեր կը կարծեն թէ խնդրի առարկայ եղալ օրէնքը ուղղակի բռնարարում մ'է քաղաքացիի մը անհատական անձնամխելի իրաւանց:

Նազանգապետ Կէյն ձերբակալուեցաւ անցեալները Լօս Անձէլլոսի մէջ ու ձերբակալուելէ անմիջապէս յետոյ առարկութեանց բողոքագիր մը ներկայացուց Գատարանին՝ մտանոնիչ ընելով թէ օրինաց հակառակ էր Նազանգի մը կրտստարիչը կամ Միացեալ Նազանգաց Նախագահը ձերբակալիլ այսօրինակ ամբաստանութեան մը համար: Գատարանը խնդիրը նկատողութեան տուաւ՝ քանի մը օրէն իր վճիռը տալու պայմանաւ՝ Նազանգապետէն յիսուն տարրի երաշխաւորութիւն տանուեցաւ, և գատարան ինք ստանձնեց այս գումարին պատասխանատուութիւնը:

Թուրքոյէն քաշուած հեռագիր մը կըսէ թէ Սանթա Ֆէ երկաթուղոյ ընկերութիւնը արեւելքէ Քալիֆորնիա գալ և հոս հաստատուիլ ուղղուներու համար սովորական ճանապարհածախսի վրայ մեծ գեղջ մը ըրած է, զայն 25 տարրի իջեցնելով:

Կենդանեաց անգթութիւն ընելն արդիւրակ ընկերութիւնը ձերբակալիլ պիտի տայ Ռոպինսոն անուն խաբշիկ մը որոյ երկու ձիերը անցեալ օր ամբողջ օրը Լէֆ փողոցի մօտերը կապուած կը մնային սաք արեւին տակ՝ անօթի և ծարաւ: Ռոպինսոն Բամթ խնդրին մանրամասնութիւններն հաղորդած է այս ընկերութեան, որմէ կը տեսնուի թէ խեղճ կենդանիները չարաչար գործածուած ըլլալէ զատ շատ մը վէրքեր ունին իրենց մարմնոյն վրայ: Մեր մեջ ալ շատեր կան որք պահանջուած ինամքը չեն տանիր իրենց ձիերուն, այսպիսիք գիտնալու են թէ օրէնքը պատիժ անօրինած է անոնց հետ անգթութեամբ վարուողներու համար:

Աւետիս Կակոսեան Սէլմայի կողմերը քսան արտավարնոց այդի մը գնեց Փօլ Տարթ անուն մէկ մը հազար և հինգ հարիւր տարրի:

Մ. Մինասեան Պրուքլինէն քաղաքս կը հասնի այս օրեր:

Տիկին Բասիկեան և իր երկու զուակները Սան Ֆրանսիսկօ գնացին:

Պատ. Ֆիլեանս որ ամբոն առթիւ Սան Ֆրանսիսկօ կը գտնուէր, զարձաւ անցեալ շաբթու:

Տքթ. Ղազարեան մէկ շաբաթի օդափութութեան համար Սան Ֆրանսիսկօ գնաց:

Օր. Ագապի Քիպարեան, Տիկին Մելգանեանի քոյրը, Պօլէն ճամբայ ելած է Ֆրէզնօ գալու համար, որ կահնկալուի հասնիլ քանի մը օրէն:

Վերջի պահուս կիմանոնք թէ Նիւ Ջէրզիի Իսթ Օրէնճ քաղաքէն Օր. Ագնիւ Ալթունեան ճամբայ ելած է Ֆրէզնօ գալու համար:

Լ Ա Ի Ա Գ Ո Յ Ն Գ Ա Ր Ե Զ Ո Ւ Ր Ը  
ՖՐԷԶՆՈՅԻՆՆ Է

\*\* ՓՈՐՉԵՑԷՔ ԶՍՅՆ ԵՒ ՀԱՄՈՉՈՒԵՑԷՔ: \*\*

ՃԻՆԹՐՈԹ - ՊՕՐՏՐՕ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ  
1815, 1821 ԹՈՒԼԱՐԻ ԸՍԹԻԹ  
Մեծաքանակ վաճառականք Նափայի, Սընոմայի ևն. գինիներու, սեղական և ներածեալ օղիներու:  
ՆԵՐԿԱՑԱՑՈՒՑԻՉ ԷՑՃԼՆԹՆԵՐ  
Բիւսթիլովի սպաշով գեղ ճանչցուած ՈՒԻԹԸՆԻ ՍԷՏԻՍԻՆԼ Լուրերուն: —Թէյէֆօն, Ուայթ 817:—

ԹՐԷՅ ԹՈՒՂԹԻ  
ԿԱՄ ԹՈՒՂԹ ԹՐԷՅԻ

ՀԱՄԱՐ ԳՆԱ  
Տօրսիյ Րապիւսըն Ընկ.  
Ֆրէզնօ և ԱՅ Փողոցներու անկիւնը